## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՐԱՏԻՍԼԱՎԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1 մայիսի 2000 թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բրատիսլավայի փոխքաղաքապետ Պավոլ Մինարիկին ու նրա գլխավորած Բրատիսլավայի իրավաբանական համալսարանի պատվիրակությանը՝ ՀՀ գլխավոր դատախազի առաջին տեղակալ Աղվան Հովսեփյանի ընկերակցությամբ:

Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնելով երկու երկրների միջև առկա բարեկամական կապերի առնչությամբ, կարևորեց նաև իրավագետների փոխհամագործակցությունը, ասպարեզ, որի շնորհիվ հստակեցվում ու բանաձևումն է գտնում ցանկացած փոխհարաբերություն:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻՆ ՀԱՆՁՆԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1 մայիսի 2000 թ.:**

Ապրիլի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների սրահում, ձեռամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի, «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան հանձնվեց մեծանուն բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին:

Բանաստեղծուհուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության շքանշանով պարգևատրելու կոնդակը դեռևս մեկ տարի առաջ հրապարակել էր երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսը՝ Կապուտիկյանի ծննդյան 80-ամյակի առիթով՝ ի գնահատություն նրա գրական ու հասարակական բազմանվեր ծառայության, հայ մշակույթին ու դպրությանը բերած մեծ նպաստի:

Իր օրհնությունը տալով Ս. Կապուտիկյանին՝ Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց նրա հայրենասեր ու հայրենաշունչ ոգին, արի պահվածքը: Բանաստեղծուհու արվեստը բարձր գնահատեց նաև Տ. Ներսես արքեպս. Պողոսյանը:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, մշակույթի գործիչներ: Վեհափառ Հայրապետի հրավերով ներկա էր նաև Արամ Ղարաբեկյանի գլխավորած նվագախումբը, որն իր անկրկնելի կատարումներով շնորհավորեց բանաստեղծուհուն: Կապուտիկյանի բանաստեղծությունների արտասանությամբ շնորհավորանքներին միացան նաև հանրապետության ճանաչված ասմունքողները: